

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը (աշխարհիկ անվամբ՝ Նշան Սարգսյան) ծնվել է 1932 թվականի օգոստոսի 27-ին Քեսաբում (Սիրիա)։ Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ուսումնասիրաց միացյալ վարժարանում, որից հետո ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում (1946 թ. հոկտեմբեր—1952 թ. հունիս)։ Այստեղ էլ, 1949 թ. մայիսի 29-ին, ձեռնադրվել է սարկավագ։

1952 թվականի սեպտեմբերի 28-ին, ձեռնադրվելով կուսակրոն քահանա, ապագա կաթողիկոսը, ի հիշատակ հանգուցյալ Գարեգին Ա. Հովսեփյան կաթողիկոսի, վերակոչվում է Գարեգին աբեղա։ Պաշտպանելով վարդապետական ավարտուճառը (թեման՝ «Հայաստանեայց Եկեղեցոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Շարականներուն»), 1955 թվականի հունիսի 5-ին ստանում է վարդապետական աստիճան, պաշտոնավարում Դպրեվանքում՝ որպես ուսուցիչ և հսկիչ։ Որոշ ժամանակ անց (1956 թ.) ստանձնում է Դպրեվանքի տեսչի պաշտոնը։

1957—59 թթ. Գարեգին վարդապետն ուսումնառությունը շարունակում է Օքսֆորդի համալսարանում (Անգլիա)։ Երկամյա ուսումնական և ուսումնասիրական շրջանը ճշանավորվում է B.ª Litt (OXON.) աստիճանով, երբ ներկայացնում է «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» ավարտուճառը (այն 1965 թ. հրատարակվել է Լոնդոնի S. P. C. K. հրատարակչատան կողմից, վերահրատարակվել է Նյու Յորքում, 1976 թ.)։ Ետուսումնառության շրջանը ճշանավորվում է տեսչական գործունեությամբ։ Նույն շրջանում Գարեգին վարդապետը գործուն մասնակցություն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ։ Երջանկահիշատակ Խորեն Վեհափառի ընտրությունից հետո (1963 թ. մայիսի 5) նա կազմակերպել է նորընտիր կաթողիկոսի պաշտոնական այցելությունները՝ Աթենք (Հունաստանի Արքեպիսկոպոսին), Վատիկան (Պողոս Բ Պապին), Լիսա-

ֆոն (Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն), Լոնդոն (Քենթրբերիի Արքեպիսկոպոսին), Ժնև (Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ), Վենետիկ ու Վիեննա (Մխիթարյան միաբանություն)։

1955 թվականից ի վեր եղել է միջեկեղեցական կազմակերպությունների ու կառույցների անդամ, կանոնավորապես ներկա է եղել միջկրոնական հանդիպումներին։ Շնորհիվ նրա ջանքերի և երջանկահիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի իմաստուն տնօրինման, 1962 թ. օգոստոսին Կիլիկյան Կաթողիկոսությունը անդամ է դառնում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին (ԵՀԽ)։ Մասնակցել է ԵՀԽ Նյու Դելիի (Հնդկաստան, 1961 թ.), Ուփսալայի (Շվեդիա, 1968 թ.), Նայրոբիի (Քենիա, 1957 թ.) և Վանկուվերի (Կանադա, 1983 թ.) համագումարներին։

Դիտորդի կարգավիճակով մասնակցել է Վատիկանի երկրորդ ժողովի երեք հաջորդական նիստերին (1963—65 թթ.) և Անգլիկան Եկեղեցու Լամբեթի համաժողովին (1968 թ.)։ Ուփսալայում (1968 թ.) ընտրվել է ԵՀԽ կենտրոնական և գործադիր հանձնախմբերի անդամ, իսկ Նայրոբիի համագումարում (1975 թ.)՝ խորհրդի փոխատենապետ (1975—83 թթ.)։ Նշանակալից է նրա դերը Ադիս Աբեբայում արևելյան ուղղափառ դավանակից քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդների համագումարի կազմակերպման գործում։ 1963 թ. հունիսի 16-ին, շնորհիվ նվիրյալ ծառայության, Խորեն Ա. Կաթողիկոսի տնօրինությամբ նրան շնորհվում է Ծայրագույն վարդապետի աստիճան։ Եպիսկոպոս է ձեռնադրվել 1964 թ. հունվարի 19-ին, արքեպիսկոպոս՝ 1973 թ. ապրիլի 26-ին։ 1963 թ. հիմնել է Հայաստանյայց Եկեղեցվո համալսարանական ուսանողների միությունը (ՀԵՀՄ)։

Աստվածաբանության, գրականության, պատմության և մշակույթի թեմաներով դասախոսել է ՀԲԸՄ Դարուսի Հակոբյան երկրորդական վարժարանում, Բեյրութի «Համազգայինի» Նշան Փալանջյան ճեմարանի Beirut College for Women-ի (ներկայումս՝ Beirut University College) և Բեյրութի Ամերիկյան համալսարանում (A.U.B), դասախոսություններով հանդես է եկել մի շարք եկեղեցիներում։ 1971 թ. փետրվարի 24-ին Գարեգին եպիսկոպոսը ընտրվել է Իրան-Հնդկաստան թեմի առաջնորդ (Նոր Ջուղա, Իսֆահան, Պարսկաստան)։ Նրա այս առաջնորդական շրջանում ծաղկում է ապրել թեմի հոգևոր-մշակութային կյանքը, որը գործում է եղել երիտասարդության մասնակցությամբ, հիմնվել է թանգարան, կազմակերպվել մատենադարան, կյանքի կոչվել երիտասարդական միություններ, հաստատվել հայագիտական դասընթացներ։

1973 թ. հունիսի 21-ին Գարեգին եպիսկոպոսը նշանակվում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի (Նյու Յորք) պատվիրակ, մեկ տարի անց ընտրվում առաջնորդ։

1977 թ. մայիսի 22-ին ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Խորեն Ա. Կաթողիկոսի կենդանության շրջանում գործում Աթոռակից Կաթողիկոս տիտղոսի տակ, իսկ 1983-ից, Խորեն Ա. Կաթողիկոսի վախճանվելուց հետո, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո։

Իր գործունեության 18 տարիների ընթացքում Գարեգին Բ Վեհափառը զարկ է տվել ազգային-կրոնական, մշակութային և շինարարական աշխատանքներին։ Վեհափառը հաստատեց քրիստոնեական դաստիարակության բաժանմունքը, որն աչքի ընկավ քրիստոնեական առողջ դաստիարակության ծրագրված և հետևողական աշխատանքով։ Նրա հատուկ ուշադրության առարկա դարձավ Դպրեվանքը (1977 թ. Անթիլիասից այն

փոխադրվեց Բիկֆայա), որը ընդարձակվեց ու արդիականացվեց՝ նպաստելով աստվածաբանական կազմավորման բարելավմանն ու առաջադիմությանը: Գարեգին Բ Կաթողիկոսը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց հրատարակչական գործին. վերջին 18 տարիներին տպագրվել է ավելի քան 350 հատոր աշխատություն: Ներկայումս ավարտին է մոտենում թանգարան-մատենադարանի շենքի շինությունը:

Վեհափառի գահակալության առաջին շուրջ 15 տարիները զուգադիպեցին Լիբանանի պատերազմի դժվարին տարիներին: Նա կիսեց լիբանանահայության տառապանքը՝ թե՛ նյութապես, թե՛ բարոյապես սատար կանգնելով համայնքին՝ չթողնելով, որ այն հուսալքվի: Վերջնի մի քանի տարիներին նա ձեռնարկեց հովվապետական մի շարք այցելություններ, միջեկեղեցական ծիրի մեջ այցելություններ տվեց հոգևոր առաջնորդների, եկեղեցիների, հոգևոր միությունների: Ավարտելով իր այցելությունները, Գարեգին Բ Կաթողիկոսը, որպես ՄԱԵԽ-ի երեք նախագահներից մեկը, ընտրվեց Խորհրդի պատվավոր նախագահ:

Գարեգին Բ Կաթողիկոսը բազմիցս այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (երեք անգամ՝ իր վարդապետության շրջանում և ինը անգամ՝ որպես Կաթողիկոս): 1988 թ. դեկտեմբերի յոթի չարաղետ երկրաշարժից հետո նա եղել է Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին՝ բերելով իր եղբայրական սերն ու զորակցությունը:

Գարեգին Բ Կաթողիկոսը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Նա գրական-աստվածաբանական մարզում բազմաթիվ հոդվածների և հատորների հեղինակ է, որոնք բազմիցս հրատարակվել են տարբեր լեզուներով:

Ապրիլի 4-ին Ազգային-Եկեղեցական սրբազումար Ժողովը Գարեգին Բ-ին ընտրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՀԱՏՈՐՆԵՐԸ

«Հայաստանեայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», Անթիլիաս, 1955, 120 էջ, վերահրատարակուած աւելի ընդարձակեալ ձեւով, 1973ին, Նոր Ջուղա, եւ 1994-ին, Անթիլիաս:

„A Brief introduction to Armenian Christian Literature", Faith Press Լոնտոն, 1960, (Անգլերէն, 84 էջ), վերահրատարակուած Նիւ Եորք, 1975ին, ֆրանսերէնով, Փարիզի մէջ, 1964ին:

„The Council of Chalcedon and the Armenian Church", S.P.C.K. Լոնտոն, 1965, վերահրատարակուած Նիւ Եորքի մէջ, 1979ին (264 էջ):

„The Witness of Oriental Orthodox Churches", Անթիլիաս, 1968, (92 էջ), երեք հրատարակութիւն:

„The Armenian Church in Contemporary Times". Նիւ Եորք, 1970, (40 էջ), վերահրատարակուած Քէմպրիճի Համալսարանի տպարանէն;

„Iran and the Armenians", Թեհրան, 1971, հրատարակուած է նաեւ պարսկերէնով:

„The Armenian Christian Tradition in Iran", Նոր Ջուղա, Իրան, 1974, ֆրանսերէնով եւ անգլերէնով, (31 էջ):

„Heroic Posterity", Նիւ Եորք, 1975 (152 էջ):

«Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան», Անթիլիաս, 1979, (174 էջ):

«Հող, Մարդ եւ Գիր», Անթիլիաս, 1983, Բ. հրատարակութիւն՝ Նիւ Եորք, Գ. հրատարակութիւն՝ Անթիլիաս, 1991:

«Ծանի՛ր զքեզ», Անթիլիաս, 1983 (176 էջ):

«Խորհէ՛ եւ մտիր», Անթիլիաս, 1984 (292 էջ):

«Անցեալը անցած չէ...», Անթիլիաս, 1985 (176 էջ):

„The Cross Made of the Cedars of Lebanon", Անթիլիաս, 1989 (24 էջ):

«Ան-ժամանակը Ժամանակին մէջ», Անթիլիաս, 1989 (184 էջ):

«Հայ Մարդը Հայ Գիրքին դիմաց», Անթիլիաս, 1990 (184 էջ):

„Not Fiction", Անթիլիաս, 1990 (60 էջ): Թարգմանուած է նաեւ ֆրանսերէնի (Histoir Vécue...) եւ արաբերէնի («Հաքիքա լայսադ խայալան») 1992, (48 էջ):

„In Search of Spiritual Life", Անթիլիաս, 1991 (288 էջ). վերահրատարակուած 1994ին:

«Վասն Հայրենեաց...», Անթիլիաս, 1992 (48 էջ):

«Ես Յաղթեցի Աշխարհին—Յարութիւն եւ Հայութիւն», Անթիլիաս, 1993 (203 էջ):

«1700-ամեակը Նոր Հոգեգալուստ», Անթիլիաս, 1994 (64 էջ):

Փետրուար, 1995
Անթիլիաս:

ՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ